

կոլտ այս յաջողութեան մէջ աննախանձարար կը յիշատակէ, ո՛չ միայն իր Զըւարթին (= Գրիգոր) «բեհերօն, հայրը, այլ նաեւ իր Ռէթուպի եղբայրն Աբրահամը, «վսեմարան եւ քաջաշնորհ», վարդապետը, որ Շղթայակրէն ետքը էր «վերատեսուչ եւ արժանաժառանգ Առաջնորդ Տարօնոյ եւ գահակալ սրբոյ ուխտին այնորիկ».¹ Ճերուհի Ներսէս ճգնազգեաց Վրդ. ք. եւ Յովհաննէս Վրդ. ք.:

Պոլիս այն միջոցին ամէնէն տխուր վիճակ մ'ունէր եկեղեցականօրէն: Ամէն եկեղեցական, վարդապետ, քահանայ, եպիսկոպոս, մէյմէկ կուսակցութիւններու գլուխ, կամ կուսակցութեան մէջ՝ բարձի փառքի ետեւէ էին:

Այսչափ անկում եկեղեցականութեան մէջ եւ Պոլսոյ պատրիարքական աթոռին շուրջ՝ ինչպէս նաեւ Էջմիածնի, Երուսաղէմի մէջ, ԺԷ. դարը միայն կրնայ պատկերացընել. պատկերներ՝ որոնց ծագումը, պատմութիւնը պժգանք կ'ազդէ ընթերցողին: Ժողովրդեան բարի տրամադրութիւններն ալ, եկեղեցասէր ու հոգեսէր արտայայտութիւններն ալ յագեցած էին կարծես եկեղեցականութեան ինկած, տափակցած գործերէն: Մասնաւորապէս քանի մը Ակնեցի մեծահաւատ հռոմէացիներ,² նախանձախնդիր եկեղեցական բարե-

1 Եւ ետքը Վաթողիկոս՝ Աբրահամ Բ. Մշեցի կամ Խոշարեցի 1730-1734 Նոյեմ. 11: Կոլտ ուղղակի շնչանակեր թէ Աբրահամ Վարդապետ ո՞ր տարին Առաջնորդ եղաւ Ս. Կարապետի: Բայց որովհետեւ իր յիշատակարանը գրած տարին (1719) Առաջնորդ է, կ'ըսէ Աբրահամի համար, յայտնի է որ Շղթայակրի յաջորդած է 1717ին, երբ սա՛ Երուսաղէմի պատրիարք ընտրուելով Ս. Կարապետը թողուց եւ Պոլիս եկաւ:

2 Ափրո կոչումը դեռ ծանօթ չէ այս ժամանակամիջոցին: Մասնաւանդ, մահատեղի եւն անուաններն են որ ետքը Ափրոյով կը փոխանակուին: